Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2023

Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ Սահմանադրության օրվա առթիվ:

Սահմանադրության ընդունումը ժողովրդի և պետության համար ունեցել է պատմական նշանակություն, դարձել է անկախ պետականության կարևորագույն խորհրդանիշը, ժողովրդավարական արժեքների արմատավորման, քաղաքացիական հասարակության ձևավորման ուղիով ընթանալու, երկրի բնականոն զարգացման ապահովման հիմնական երաշխավորը:

Ցանկանում եմ, որ իրավունքը, օրենքը դառնան մեր հանրային, քաղաքացիական հարաբերությունների կարգավորման առանցքային գործոնը:

Միայն քաղաքացիական հասարակության և պետության սերտ կապը կարող է կառուցել քաղաքակիրթ հասարակարգ, որում ազատությունը և հասարակական կարգը լիովին հավասարակշռված են:

Հասարակական համերաշխության համար պատասխանատու է յուրաքանչյուր քացաքացի, և բոլորիս պարտքն է ամենօրյա աշխատանքով և նվիրումով ծառայել և հավատարիմ մնալ Սահմանադրությամբ ամրագրված օրենքներին:

Միայն այս դեպքում ՀՀ Սահմանադրությունը կնպաստի մեր ազգային իղձերի ու նպատակների իրականացմանը:

Սահմանադրության նկատմամբ հարգանքն է այն հիմքը, որի վրա կառուցվում է ազատ, ժողովրդավարական և ուժեղ Հայաստան:

Կրկին շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին: Մաղթում եմ խաղաղություն, լավատեսություն, բարեկեցություն և ամուր հավատ մեր պետականության ապագայի նկատմամբ: